



Ծրագիրը
ֆինանսավորվում է
Եվրոպական միության
կողմից

Ծրագիրը համաֆինանսավորվում
է
ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի
կողմից

Իրականացնող՝
Իրավաբանների հայկական
ասոցիացիա

Իրականացնող՝
Հայաստանի ՔՀԿ-
ների
հակակոռուպցիոն
կոալիցիա

Գործընկեր՝
Ինֆորմացիայի
ազատության
կենտրոն

**«Բարձրաստիճան պաշտոնատար և նրանց փոխկապակցված անձանց զույքի և
եկամուտների հայտարարագրման համակարգի խնդիրները»**

ԱՄՓՈՓՈՒՄ

**Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիա՝ ի դեմս «Իրավաբանների
հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության**

Երևան,
2016թ՞

«Բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի,
եկամուտների և փոխկապակցված անձանց հայտարարագրման համակարգի թափանցիկության
բարելավման խնդիրներն ու իրականացվող բարեփոխումները».
հակակոռուպցիոն միջոցառում (p. Վանաձոր).

2016 թվականի հոկտեմբերի 12-ին Վանաձոր քաղաքում «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը, Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի և Ինֆորմացիայի ազատության կենտրոնի հետ համատեղ, Եվրոպական միության ֆինանսավորմամբ և ԵԱՀԿ երևանյան գրասենյակի համաֆինանսավորմամբ իրականացվող «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի շրջանակներում ՀՀ Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի աջակցությամբ կազմակերպեց հակակոռուպցիոն միջոցառում՝ *«Բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց հայտարարագրման համակարգի թափանցիկության բարելավման խնդիրներն ու իրականացվող բարեփոխումները» թեմայով:*

Միջոցառման նպատակը նշված ոլորտում առկա կոռուպցիոն խնդիրների վերհանումն էր և համապատասխան լուծումների նախանշումը: Միջոցառմանը մասնակցում էին Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի, ԶԼՄ-ների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչներ, ինչպես նաև «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի տեղական փորձագետը:

Միջոցառման սկզբում ողջույնի խոսքով հանդես եկավ Իրավաբանների հայկական ասոցիացիայի նախագահ, ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի քարտուղարության համակարգող **Կարեն Զադոյանը**, ում խոսքերով՝ ներկայումս պաշտոնատար անձանց գույքի և եկամուտների հայտարարագրերի ինստիտուտի թափանցիկության մասին խոսում են ինչպես լրատվամիջոցները, այնպես էլ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները: Ըստ նրա՝ համակարգը դեռ բարելավման կարիք ունի. *«Մյն չի կարող ինքնին արդյունավետ գործել, եթե իրենց դերը չունենան քաղաքացիական հասարակության կազմակերպություններն ու ԶԼՄ-ները՝ հենց համակարգի թափանցիկության համար և այսպես ասած՝ հանրային աչքի դերը տանելու, հանրային վերահսկողություն իրականացնելու համար»*,- նշեց Կարեն Զադոյանը: Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի (այսուհետև՝ Հանձնաժողով) նախագահի տեղակալ **Արմեն Խուդավերդյանն** իր ողջույնի խոսքում նշեց, որ կարևորում է նմանատիպ միջոցառումների կազմակերպումը հատկապես մարզերում, այնուհետև ներկայացրեց Հանձնաժողովի ներկայացուցիչներին և վերջիններիս կողմից ներկայացվելիք զեկույցների թեմաները:

Ողջույնի խոսքերին հաջորդեցին զեկույցներ բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց հայտարարագրման համակարգի թափանցիկության բարելավման խնդիրների ու իրականացվող բարեփոխումների, ոլորտում առկա մարտահրավերների հաղթահարման և ՔՀԿ-ների հետ համագործակցության հնարավորությունների վերաբերյալ:

Հակակոռուպցիոն միջոցառմանը զեկույցներով հանդես եկան հանձնաժողովի անդամ **Արտակ Մարգարյանը**, ով ներկայացրեց զեկույց՝ *բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց հայտարարագրման համակարգի թափանցիկության բարելավման խնդիրների ու իրականացվող բարեփոխումներ* վերաբերյալ: Իր զեկույցում, նա կարևորեց էլեկտրոնային համակարգի ներդրումը: Հանձնաժողովի անդամ **Էդգար Շաթիրյանը** ներկայացրեց՝ *բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց հայտարարագրման գործող համակարգը*: Նա նշեց որ հայտարարագրման ենթակա տվյալների շրջանակը համահունչ չէ հայտարարագրման ինչպես ապօրինի հարստացման, այնպես էլ շահերի բախման կանխարգելման մոդելին: Հանձնաժողովի նախագահի տեղակալ **Արմեն Խուդավերդյան** ներկայացրեց՝ «Բաց տվյալներ» պաշտոնական հայտարարագրերում. Բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց հայտարարագրերի էլեկտրոնային համակարգի կատարելագործում թեմայով զեկույց:

Հակակոռուպցիոն միջոցառմանը զեկույցներով հանդես եկան նաև «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի տեղական փորձագետ **Մարատ Ատովյանը**, ով ներկայացրեց զեկույց՝ ՔՀԿ-ների հետ համագործակցության կարևորությունը՝ հայտարարագրման ինստիտուտի թափանցիկության ապահովման գործում, կարևորելով քաղաքացիական հասարակության մասնակցությունը Հանձնաժողովի գործունեության մեջ: Իրավաբաններ կայքի լրագրող **Գևորգ Թոսունյանը**, ով ներկայացրեց ՋԼՄ-ների դերը Բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման թափանցիկության ապահովման գործում:

Չեկույցներին հաջորդեց արդյունավետ քննարկում, որի ընթացքում բարձրացված հարցերը վերաբերում էին հայտարարագրման համակարգի թափանցիկությանը, շահերի բախմանը, պաշտոնյաների կողմից ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու խնդիրներին և այլն:

Նշենք, որ միջոցառման արդյունքում հավաքագրված առաջարկությունները քննարկման համար կուղղարկվեն ՀՀ կառավարություն, ՀՀ արդարադատության նախարարություն և

Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով, ինչը կնպաստի ոլորտում արդյունավետ բարեփոխումների իրականացմանը:

Խնդիրներ և առաջարկություններ

1. Առկա չեն գործուն մեխանիզմներ տվյալ ոլորտում հասարակության ներգրավվածությունը ապահովելու համար:

Առաջարկ 1. ՀՀ բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովին (այսուհետ՝ Հանձնաժողով) կից ստեղծել հասարակական խորհուրդ:

Առաջարկ 2. Հանձնաժողովի ձևավորմանը մասնակից դարձնել նաև քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին:

3. «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված է, որ հայտարարագրման սուբյեկտներ հանդիսանում են միմիայն բարձրաստիճան պաշտոնատար անձինք: Սակայն որոշ ոլորտներում, որտեղ ցածրաստիճան պաշտոնատար անձանց և հասարակության հետ շփումը առավել սերտ է, օրինակ՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ը, ՀՀ ԱՆ ԴԱՀԿ-ն, ՀՀ ՃՈ-ն և այլն, կոռուպցիոն ռիսկերը շատ են:

Առաջարկ 3. Փոփոխություններ կատարել «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում և զգալիորեն ընդլայնել հայտարարագիր ներկայացնող պաշտոնյաների շրջանակը՝ առաջին փուլում ընդգրկելով նաև ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի, ՀՀ ԱՆ ԴԱՀԿ-ի, ՀՀ ՃՈ-ի աշխատակիցները: Սակայն իդեալական արդյունքի հասնելու համար անհրաժեշտ է առհասարակ բոլոր պաշտոնատար անձանց կողմից հայտարարագրման պարտավորություն սահմանել:

Ծանոթագրություն 2016 թվականին մշակվել է «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը, որով ընդլայնվել է հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող պաշտոնատար անձանց շրջանակը: Նախագիծը սույն թվականի դեկտեմբերի 15-ին ներկայացվել է ՀՀ նախագահի աշխատակազմ:

4. Հայտարարագրերից կարելի է հասկանալ, թե նվիրատվությունը որքան է կազմել ու երբ է տրամադրվել, սակայն անհայտ է մնում, թե ով է նվիրատվություն կատարած անձը, ինչպես նաև՝ նվիրատվության պատճառներն ու հիմքերը: Այս հանգամանքը քաղաքացիների շրջանում բազմաթիվ կասկածների տեղիք է տալիս, իսկ լրագրողները դրանց մեջ տեսնում են նաև կոռուպցիոն ռիսկեր:

Առաջարկ 4. Փոփոխություններ կատարել «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում և սահմանել նվիրատվության աղբյուրը հայտարարագրելու պարտավորություն:

5. Հակակոռուպցիոն միջոցառման մասնակիցների խոսքերով՝ կան դեպքեր, երբ պաշտոնատար անձի հայտարարագրում նշված է լինում, որ նա ձեռք է բերել բնակարան, այգետնակ ու մեքենա, միաժամանակ հայտարարագրում երևում է, որ ստացել է նույն չափի նվիրատվություններ՝ բնամթերքի տեսքով: Ինչպես բնամթերքի, այնպես էլ ձեռք բերված գույքի գները որոշ դեպքերում համապատասխանում են, այնպես որ ստացվում է պաշտոնյան որպես նվիրատվություն ստացել է հենց գույք:

Առաջարկ 5. Առաջարկվում է տարակարծությունները վերացնել և հստակորեն նշել, թե հատկապես ինչ է նվեր ստացել պաշտոնյան:

6. Հայտարարագրերում չի նշվում, թե պաշտոնատար անձի շարժական գույքը՝ մեքենան, որ տարեթվին է ձեռք բերել՝ հնարավարություն չտալով պարզել ձեռքբերման իրական արժեքը և հայտարարագրողի ֆինանսական արտահոսքը:

Առաջարկ 6. Առաջարկվում է նշել շարժական գույքի ձեռքբերման տարեթիվը:

7. «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածը հստակ նշում է, որ հանրային ծառայողը և բարձրաստիճան պաշտոնատար անձը չեն կարող անձամբ զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, ինչպես նաև նշվում է, թե որն է ձեռնարկատիրական գործունեություն համարվում և որը՝ ոչ: Ըստ այդմ՝ **ձեռնարկատիրական գործունեություն չի համարվում 75 և ավելի տոկոս Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ առևտրային կազմակերպության տնօրենների խորհրդի (դիտորդ խորհուրդ) կազմում քննարկված լինելը, եթե այն ուղղակիորեն առնչվում է հանրային ծառայողի կամ բարձրաստիճան պաշտոնատար անձի պաշտոնավարման ոլորտի քաղաքականության իրականացման հետ՝ առանց վարձատրության կամ որևէ այլ ձևով փոխհատուցում ստանալու կամ ոչ հանրային ծառայողների կամ բարձրաստիճան պաշտոնատար անձանց համար նախատեսված սոցիալական երաշխիքներից կամ այլ ծառայություններից կամ արտոնություններից օգտվելու իրավունքի:** Անհասկանելի է, թե ինչու վերոնշյալը չի համարվում ձեռնարկատիրական գործունեություն:

Առաջարկ 7. Առաջարկվում է վերացնել այս դրույթը:

8. Միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ հայտարարագրման վերլուծություն իրականացնող մարմնի համար արժեքավոր հիմք են հանդիսանում նաև ազդարարների կողմից տրամադրված տեղեկատվությունը:

Առաջարկ 8. Առաջարկում ենք ներպետական օրենսդրության մեջ ամրագրել ազդարարների պաշտպանության մեխանիզմները և «*qui tam*» հայեցակարգը, որը կիրառելի է վերոնշյալ ոլորտի համար:

Ծանոթագրություն.

Այսօր դեռ միջազգային մակարդակով չի ձևավորվել մեկ միասնական իրավական պատկերացում կապված «whistleblowing» տերմինի հետ, որն թարգմանաբար նշանակում է հակաօրինական գործողությունների վերաբերյալ հաղորդում: Ըստ Black's Law Dictionary-ի whistleblower է համարվում այն աշխատակիցը, ով հաղորդում է գործատուի սխալ արարքները իրավապահ մարմինների: Այսինքն վերոնշյալ տերմինը կիրառվում է և հանրային, և մասնավոր սեկտորի համար:

Անձինք, ովքեր հայտնում են տեղեկություններ կոռուպցիայի կամ այլ անօրինական գործողությունների վերաբերյալ, ունեն շատ մեծ դեր կոռուպցիոն գործողությունների և պաշտոնական լիազորությունների չարաշահման բացահայտման վերաբերյալ: Սակայն գործելով ի շահ հանրության՝ վերջիններս վտանգի տակ են դնում իրենց սեփական անվտանգությունը: Կոռուպցիայի դեմ պայքարում կարևոր նշանակություն ունի տեղեկատվություն հաղորդող անձանց պաշտպանության մեխանիզմների ներդրումը:

Նման պաշտպանության տրամադրում նախատեսված է ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ պայքարի կոնվենցիայի 33-րդ հոդվածով, ինչպես նաև Եվրոխորհրդի Կոռուպցիայի մասին քրեական և քաղաքացիական իրավունքների մասին կոնվենցիաներով, Աշխատանքի միջազգային կազմակերպության Աշխատանքի ավարտի մասին կոնվենցիայով:

Ազդարարների պաշտպանության ինստիտուտի վերաբերյալ առկա են նաև ԵԽԽՎ 2 բանաձևեր՝ 2009թ. սեպտեմբերի 14-ին ընդունված բանաձևը, որը առհասարակ պաշտպանության մեխանիզմների ներդրման մասին է առհասարակ և հանրային, և Մասնավոր ոլորտներում, և 2015թ. մայիսի 19-ին ընդունված բանաձևը, որը պետության պաշտպանության ներքո է դասում նաև ազգային անվտանգության և հետախուզական տեղեկատվության հավաքագրման գործակալության համար աշխատող անձանց, ինչպես նաև Եվրոպայի խորհրդի մասնակից պետություններում ապաստանի տրամադրվող այն դեպքում, երբ նրանք հետապնդվում են իրենց հայրենիքներում:

Ազդարարների պաշտպանության մասին գործում են նաև 2014թ. Նախարարների խորհրդի հանձնարարականը, ինչպես նաև ՄԻԵԴ-ը *Guja v Moldova, Vogt v Germany, Wille v Liechtenstein, Babar Ahmed and others v the United Kingdom, Fuentes Bobo v Spain* գործերում: Այն արդյունավետ կիրառվում է հակակոռուպցիոն պայքար մղող մի շարք պետությունների կողմից, օրինակ՝ Միացյալ Նահանգներ, Կանադա, Անգլիա և այլն:

Ուստի անհրաժեշտ է օրենքով սահմանել ազդարարների պաշտպանության մեխանիզմներ, ինչպես նաև՝ սահմանել անանուն հաղորդումների ներկայացման հնարավորություն այնպիսի առաջատար մոտեցումների և համակարգերի հիման վրա,

ինչպիսիք էին WhistleB-ն, Tor-ը և այլն: Օր՝ ԱՄՆ, Արգենտինա, Գերմանիա, Ավստրալիա, Չինաստան:

Ժողովրդավարական հասարակության կառուցմանը, կոռուպցիայի իսպառ վերացմանը նպաստելու, հասարակության տարբեր խավերին՝ կոռուպցիայի միասնական պայքարին շահագրգիռ մասնակից դարձնելու նպատակով առաջարկում ենք ներպետական իրավական համակարգում նախատեսել *«qui tam»* հայեցակարգը: Տվյալ կոնցեպցիայի համաձայն պետական միջոցների վատման գործերով տեղեկատվություն հայտնող անձինք՝ whistleblower-ը, դատարանում հաջողության հասնելու և վատնված պետական միջոցները բյուջե վերադարձնելու դեպքում կստանան «հայցի գնի» որոշակի մաս, օրինակ ԱՄՆ-ում պարգևատրումը կարող է կազմել նման կարգով բյուջե վերադարձված գումարի 15-30%-ը:

«qui tam»-ի առավելությունը կայանում է նրանում, որ այն մի կողմից քաղաքացու միջոցով փորձում է վերականգնել արդարությունը և պետության միջոցները, մյուս կողմից շահագրգռում է հասարակության անդամներին ավելի զգոն լինել կոռուպցիայի բացահայտման և վերացման գործում: Սակայն, այն պետությունը ով սահմանում է նման հայեցակարգ հստակ երաշխիքներ է նաև սահմանում պետական ծառայողներին գրպարտություններից զերծ պահելու նպատակով:

9. Հայտարարագրման ինստիտուտը փոխկապակցված է ապօրինի հարստացման ինստիտուտի հետ, մինչդեռ ՀՀ-ում այն ներդրված չէ:

Առաջարկ 9. Քրեականացնել ապօրինի հարստացումը:

Ծանոթագրություն

Հարկ է նշել, որ վերոնշյալ առաջարկը ընդունվել է և 16.12.2016–ին ապօրինի հարստացման քրեականացման վերաբերյալ նախագիծը ընդունվել է երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ՝ Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18-ի քրեական օրենսգիրքը 310.1-րդ հոդվածով հետևյալ բովանդակությամբ լրացնելու մասին.

1. Ապօրինի հարստանալը՝ «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի՝ հաշվետու ժամանակահատվածում գույքի ավելացումը և (կամ) պարտավորությունների նվազումը, որոնք էականորեն զերազանցում են նրա օրինական եկամուտները, և որը ողջամտորեն չի հիմնավորվում դրանցով, և եթե ապօրինի հարստացման համար հիմք հանդիսացող այլ հանցագործության հատկանիշները բացակայում են՝ պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ

2. Սույն հոդվածում էական է համարվում հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհազարապատիկը գերազանցող գումարը (արժեքը):»:

2016թ. դեկտեմբերի 30-ին ՀՀ նախագահը ստորագրել է վերոնշյալ նախագիծը:

10. Հայտարարագրերի հրապարակումն իրականացվում է ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված ձևաթղթով, որը PDF ձևաչափով է, ինչը թույլ չի տալիս աշխատել փաստաթղթի հետ:

Առաջարկ 10. Առաջարկվեց այն դարձնել Word ձևաչափով՝ փաստաթղթի հետ աշխատանքը հեշտացնելու նպատակով:

11. Հայտարարագրերը ուշ ներկայացնելու, չներկայացնելու, թերի ներկայացնելու կամ ոչ ճշգրիտ ներկայացնելու համար սահմանված չէ պատասխանատվություն:

Առաջարկ 11. Սահմանել վարչական և քրեական պատասխանատվություն հայտարարագրերը ուշ ներկայացնելու, չներկայացնելու, թերի ներկայացնելու կամ ոչ ճշգրիտ ներկայացնելու համար:

Ծանոթագրություն Այս մասով առաջարկն արդեն ընդունվել է: Հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից հայտարարագիրը սահմանված ժամկետում չներկայացնելու, հայտարարագրում սխալ կամ ոչ ամբողջական կամ կեղծ տվյալներ ներկայացնելու համար համապատասխանաբար վարչական և քրեական պատասխանատվություններ նախատեսող օրենսդրական փաթեթը 2016թ. սեպտեմբերի 28-ին ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից առաջին ընթերցմամբ:

Առաջարկ 12. Հիմնել նաև կարգապահական սանկցիաների համակարգ հայտարարագրերը ուշ ներկայացնելու, չներկայացնելու, թերի ներկայացնելու կամ ոչ ճշգրիտ ներկայացնելու համար, ինչպիսիք են օրինակ պաշտոնից հեռացումը, որոշակի ժամկետով, օրինակ՝ մեկ տարի, պաշտոնական առաջխաղացում ունենալու արգելքը, ինչպես օրինակ Լիտվայում է, աշխատավարձի կամ դրա որոշակի մասի չվճարելը, ինչպիսին օրինակ համապատասխանաբար Խորվաթիայում և Գերմանիայում է և այլն, աշխատավարձից նվազում, ինչպես օրինակ Կոստովոյում է:

13. Այժմ ներկայացվող հայտարարագրերում փոխառությունների մեջ են ներառված նաև ավանդները, ինչը հետաքննող լրագրողների և քաղաքացիների շրջանակում տարակարծությունների տեղիք է տալիս, այն առումով, թե բազմաթիվ պաշտոնյաներ բարձր տոկոսադրույքներով գումարներ են հատկացնում:

Առաջարկ 13. Տարակարծությունների առիթը վերացնելու նպատակով առաջարկվում է քաղաքացիական օրենսգրքի ավանդների, փոխառությունների, գրավների, վարկերի վերաբերյալ դրույթներին համապատասխան տարաջատել փոխառությունները, ավանդները և

մյուս ֆինանսական բնույթի գործարքները և համապատասխանաբար հայտարարագրերում ստեղծել առանձին բաժիններ դրանց տվյալների լրացման համար:

14. Չեն հայտարարագրվում նաև պաշտոնյաների ոչ ակտիվ հանդիսացող կատարված ծախսերը, օրինակ թանկարժեք հանգիստ, ուսում արտերկրում և այլն:

Առաջարկ 14. Սահմանել որոշակի շեմ, որից բարձր ոչ ակտիվ հանդիսացող կատարված ծախսերը ևս հայտարարագրել:

15. Միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ հայտարարագրերում կեցության ապահովման համար նվազագույն տարեկան ծախսեր բաժին (սնունդ, ճանապարհածախս, կոմունալ վճարումներ...) ներառելը օգնում է առավել ճշգրիտ հաշվարկ անել պաշտոնատար անձի գումարային ներհոսքի և արտահոսքի վերաբերյալ:

Առաջարկ 15. Հայտարարագրերում ներառել կեցության ապահովման համար նվազագույն տարեկան ծախսեր բաժին (սնունդ, ճանապարհածախս, կոմունալ վճարումներ...):

16. Ներկայումս փոխկապակցված անձանց շրջանակը, որը պարտավոր է հայտարարագրեր ներկայացնել, ներառում է միայն ամուսնուն, համատեղ ապրող չափահաս չամուսնացած զավակին և համատեղ ապրող ծնողին:

Առաջարկ 16. Հայտարարագրման ենթակա սուբյեկտների շրջանակում ընդգրկել բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ արյունակցական կապի առաջին աստիճանի մեջ գտնվող այն անձանց, որոնք ազատված են հայտարարագրման պարտականությունից, օրինակ՝ ամուսնացած, սակայն համատեղ ապրող զավակները, անչափահաս զավակները: Հայտարարագրման ենթակա սուբյեկտների շրջանակում ընդգրկել նաև բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ արյունակցական կապի 2-րդ աստիճանի մեջ գտնվող ընտանիքի մյուս անդամներին:

17. ՀՀ օրենսդրությամբ սահմանված չէ շահերի բախման հայտարարագրերի ներկայացումը:

Առաջարկ 17. Օրենսդրությամբ սահմանել շահերի բախման հայտարարագրերի ներկայացման պարտավորություն, դեպքերը, երբ պետք է այն ներկայացնել, ինչպես նաև հայտարարագրերի օրինակելի ձևեր:

18. ՀՀ օրենսդրությամբ սահմանված չէ հայտարարագրերի ստուգման և աուդիտի անցկացման համակարգ:

Առաջարկ 18. Հիմնել հայտարարագրերի ստուգման և աուդիտի անցկացման համակարգ:

19. ՀՀ օրենսդրությամբ բնութագրիչ տվյալները որոշ հայտարարագրվող տեղեկատվության վրա սահմանված են, իսկ որոշներով՝ ոչ: Վերջինս դժվարություններ է առաջացնում շահերի բախման դեպքերը պարզելու համար:

Առաջարկ 19. Բնութագրիչ տվյալները տարածել ամբողջ հայտարարագրվող տեղեկատվության վրա, ինչպիսիք օրինակ ընկերությունների անվանումներն են և այլն:

20. ՀՀ-ում առկա է մի արատավոր պրակտիկա, երբ պաշտոնատար անձինք կոռուպցիոն ճանապարհներով ձեռք բերված գույքը անվանափոխում են իրենց մտերիմ ընկերների, թիկնապահների, վարորդների և այլոց անունով: Միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ շատ երկրներում այդ անձինք ևս, ըստ հայտարարագրման վերլուծություն իրականացնող մարմնի պահանջի, պարտավոր են հայտարարագրեր ներկայացնել:

Առաջարկ 20. Սահմանել, որ հայտարարագրերի վերլուծությամբ զբաղվող մարմինը, ստուգումն իրականացնելուց հետո անհրաժեշտության դեպքում իրավունք ունի պահանջել նաև այլ իրավաբանական կամ ֆիզիկական անձանցից հայտարարագրեր, ովքեր կապված են հայտարարագրեր ներկայացնող սուբյեկտներից հետ, ինչպես օրինակ Ալբանիայում կամ Էստոնիայում է:

21. ՀՀ-ում առկա է մեկ այլ արատավոր պրակտիկա, երբ պաշտոնատար անձինք իրենց կոռուպցիոն եղանակով ստացած գումարները ձևակերպում են որպես փոխառություն:

Առաջարկ 21. Անհրաժեշտ է նաև միջոցներ ձեռնարկել և սահմանափակել կանխիկ դրամի շրջանառությունը հանրային ծառայողների համար, վերջինիս կողմից պարտադիր դարձնել փոխառության, նվիրատվության և այլ պայմանագրերի կատարման համար իրականացվելիք վճարումներն իրականացնել միայն անկանխիկ՝ բանկային փոխանցումների եղանակով: Անհրաժեշտ է համապատասխան փոփոխություններ կատարել «Փողերի լվացման և սահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի» մասին օրենքում և մեխանիզմներ սահմանել, որ 1 միլիոն ՀՀ դրամը գերազանցող վերոնշյալ գործարքները, որոնք ուսումնասիրվում են Ֆինանսական դիտարկումների կենտրոնի կողմից, զեկուցվեն համապատասխան հակակոռուպցիոն մարմնին:

Ծանոթագրություն Այս առաջարկը ևս մասամբ կատարվել է. մշակվել է գույքի և եկամուտների հայտարարագրի ներկայացնելու պարտականություն ունեցող անձանց կողմից կանխիկ դրամով կատարվող գործարքները սահմանափակող «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը, որը սույն թվականի դեկտեմբերի 16-ին ընդունվել է Ազգային ժողովի կողմից երկրորդ ընթերցմամբ:

22. Հայտարարագրման վերլուծություն առավել արդյունավետ անցկացնելու համար ՀՀ օրենսդրությամբ սահմանած չեն տեղեկատվության ձեռք բերման գործուն մեխանիզմներ:

Հարկ է նշել, որ ներկայումս խնդրահարույց են բանկային գաղտնիքի հետ կապված կարգավորումները, որոնք թույլ չեն տալիս հայտարարագրերի վերլուծությամբ զբաղվող մարմինն լիակատար իրացնել իրենց վերապահված լիազորությունները: Որոշ երկրներում, ինչպես օրինակ Կոսովոն կամ Սերբիան, վերոնշյալ մարմիններ իրավունքի ունեն պահանջել բանկային գաղտնիք հանդիսացող տեղեկատվությունը: Որոշ երկրներում, ինչպես օրինակ Ալբանիան կամ Մակեդոնիան, պաշտոնատար անձինք համաձայնվում են, որ որոշակի շեմը անցնելու և իրենց համաձայնության առկայության դեպքում, վերահսկող մարմինը բանկից մանրամասն տեղեկատվություն ստանա:

Առաջարկ 22. Հայտարարագրման վերլուծություն իրականացնող մարմինն օժտել տեղեկատվական բազաներից օգտվելու հնարավորությամբ՝ գործունեության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

Առաջարկ 23 Հիմնել ռեեստր, որում կհրապարակվի ՀՀ բոլոր բանկերում հաշիվներ ունենալու հանգամանքի մասին տեղեկատվություն՝ առանց նշելու գումարը: Այս եղանակով, մարմինը հեշտությամբ կպարզի, եթե պաշտոնատար անձը չի հայտարարագրել, սակայն ունի հաշիվ: Նման կարգավորումը կրկին կհանդիսանա հավասարակշռող մեխանիզմ հանրային և մասնավոր շահերի միջև: